մէկուն վրայ խօսքը կայ Ազիզիյէի գե-
բեզմանատան։ Մեր նախնիքները երբեք
սովորութիւն չեն ունեցած ծնունդ կամ
մահ արձանագրելու, հակառակ անոր որ
միւնոյն ձեռագրի մէջ հազար անգամ
կրկնած են անպէտ իրողութիւններ։
Այս տեսակէտով շատ գնահատելի է Հա-
լէպի Մարոնիթ Մեծարգոյտարանը, ուր
ծննդեան և մկրտութեան կանոնաւոր և
անընդմէջ արձանագիր կայ 1666էն սկս-
եալ։ Մեր Ազգ. Առաջնորդարանի ծնընդ-
եան եւ մկրտութեան քիչ շատ կանոնա-
ւոր, եւ մասամբ արաբերէն եւ անկէ ի
վեր հայերէն արձանագիրը կ'սկսի 1843-
էն մինչև 1873ը՝ արաբերէնով։ Հոս,
պարտք կ'զգամ յիշատակելու որ Արժ.
Տ. Յովհաննէս Ա. Քհնյ. Էթմէքճեան,
ինքնաբերաբար, 1909էն սկսեալ կը պա-
հէ, մինակը, Հալէպի կարեւոր և ընդ-
արձակ կեդրոնին ծննդեան, ամուսնու-
թեան և մահերու կանոնաւոր արձանա-
գիրը։ Ինչպէս ըսինք, 1650 թուական-
ներէն ասդին, զգալի անկում մը կը
յայտնուի պատմական լուրջ արժէք ունե-
ցող նախորդ ծաղկեալ շրջանին և կրօ-
նական և ազգամէջ տխուր պայքարներ
ժամանակ չեն տար մնայուն բաներու
վրայ մտածելու։ Իսկ Ազգ. Առաջնորդա-
րանի յատուկ դիւան, բաւական կանո-
նաւոր, Մովսէս Վրդ. Կէօմրիւքճեանի
օրով գոյութիւն ունի միայն, եւ ո՛չ
աւելի յառաջ։

Մինչև երեք տարի առաջ, Ս. Քա-
ռասնից եկեղեցւոյ շրջավայրի բակ - գե-
բեզմանատունը կը ներկայացնէր ողբալի
վիճակ մը։ Թէ՛ տապանաքարերը եւ
թէ մանաւանդ սալայատակի քարերը
ամբողջովին մաշած, կքած եւ մասամբ
եղած էին։ Զմեռ ատեն, Հալէպի յատուկ
յորդահոսան անձրեւներու եղանակին,
ջուրը կը լեցուէր արտաքին զոյգ մը
մեծ դուռներու ետեւը, արգիլելով շատ
անգամ ուխտաւորներու անցքը։ Տեսա-
բանը տգեղ էր մանաւանդ օտարներու
աչքին, վասնզի սոյն բակին հարաւ-արե-
ւելեան անկիւնն է Ցունաց Ս. Գէորգ
եկեղեցին, որ իբր անցք, մեր բակը
միայն ունի անյիշատակ ժամանակէ ի
վեր, առանց սակայն սեպհականութեան
իրաւունքի։ Մեր կրկնակի ստիպումնե-
րուն վրայ 1932 ին, Ս. Քառասնից եկե-
ղեցւոյ Թաղականութիւնը ամբողջովին
նորոգել տուաւ ընդարձակ բակը, օգտա-
գործելով, ի հարկէ, անվթար մնացած
քարերը, եւ այս առթիւ ծախսելով
103,77 Օսմ. հնչուն ոսկի։ Բակը ունի
294,18 մէթր քառ. տարածութիւն։

Եկեղեցւոյ բակի հին սալարկը վեր-
ցուելու և նորը հիւսուելու պահուն եր-
կու աչքառու երևոյթ դիտեցինք։ Առաջ-
նորդարանի երկաթեայ դրան բակին վրայ
նայող մուտքին առջև երբ բանուորներ,
բրիչներով հին քարերը կը վերցունէին,
տեսանք որ մեծ քարերը դէպի վար կը
կքէին. կեցուցինք զիրենք եւ տեսանք
որ երկու մարդաչափ խոր եւ մէկ մար-
դաչափ լայն, մեծ կարասի մը կամ
ջրամբարի մը ձեւով. poünuk չինուած
տեղ մը կայ, բոլորովին պարապ և մա-
քուր։ Ո՛չ եկեղեցւոյ պաշտօնեաները և
ոչ ալ տարեց հայեր չկրցան բան մը ը-
սել այս մասին։ Մեր կարծիքով անիկա
կա՛մ ջրամբար մըն է և կամ ձէթ պա-
հելու չտեմարան։ Նոյնութեամբ պահ-
ուեցաւ մէջտեղ եկած նկուղը։

Դա՛ր ձեալ դիտուեցաւ որ Զանգա-
կատան ուղղութեամբ դէպի արտաքին
դուռը տանող ներքնուղի մը կայ, բա-
ւական խոր ու լայն. այդ մասին ալ ո-
եւէ բան դիտցող չեղաւ։

Կարգադրած էինք որ բակին մէջ
գտնուող իւրաքանչիւր տապանաքար
չտկուելով, իր տեղը պիտի մնար նոյ-
նութեամբ և կամ անընթեռնելի գրով
տապանաքարերը պիտի սրբուէին եւ
պիտի գրուէին իրենց նախնական տեղը։
Այս աշխատութիւնը եղաւ շատ մեծ ու-
շադրութեամբ. բոլոր դամբարաններու
արձանագիրները խնամքով ընդօրինակ-
ուեցան առանձին տետրակի մէջ, բակի
յատակագծով եւ թուահամարով։ Քահա-
նայից դամբարանը, 12 տապանաքարե-
րով, կը գտնուէր բակի հիւս. պատին
առջև, Մարոնիթ նախկին եկեղեցւոյ
կից, գետնէն վեր 30 սնդմ. բարձրու-
թեամբ։ Եւ որովհետեւ տարիներէ ի վեր